գիս, 'ի Յորդանան, 'ի Նազարէթ և յայլ ուրեք, և սարկաւագն գրեաց զՍ. Տեղիս և զվանօրայս Երուսաղէմի, որպէս յառաջ բերեն Յոյն Արաբացիք։

Իսկ Սալահատտին մինչդեռ դեգերէր 'ի կողմանս Բերեքայ հակառակիլ Լատինաց, հայր նորա Էյուպ անկեալ 'ի ձիոյն մեռաւ։ Բարձաւ 'ի կենաց նաեւ Նուրէտտին Սուլթանն Դամասկոսի ՅԺԲ. (1173) եւ թագաւորեաց որդի նորա Սալէհ Իսմայիլ։ Եւ թագաւորն Երուսաղէմի Ամաւրի դիմեաց 'ի վերայ Դամասկոսի եւ ասպատակեալ գերեաց զաշխարհն. բնակիչք քաղաքին նեղեալ 'ի բռնութենէ՝ խոստացան տալ նմա հարկս իբրեւ զառաջինն, բայց նա ոչ առ յանձն. զի եդեալ էր 'ի մտի տիրել քաղաքին. սակայն կալաւ զնա անդ ցաւ ինչ մահաբեր, եւ ստիպեալ 'ի խթութենէ անտի՝ էառ հարկս և դարձաւ 'ի Պաղեստինս, որ այժմ կոչի Աքքէ, և մեռաւ անդ թագաւորեալ ամս 11, եւ յաջորդեաց յաթոռ թագաւորութեանն որդի նորին Բալտուին Դ։

Իբրեւ լուաւ Սալահատտին զմահ Նուրէտտինայ, եւ զթագաւորելն որդւոյ նորին, եւ զարշաւանս Լատինաց, չուս արար յԵգիպտոսէ և դէմ եդեալ դնաց 'ի Դամասկոս, և խաղաղութեամբ մտեալ 'ի քաղաքն տիրեաց նմա. էառ և զնմէս, և անտի յարուցեալ պաշարեաց զԲերիա քաղաք, ուր փախուցեալ էր նոր Սուլթանն Սալէհ։ Ապա միջնորդութեամբ երեւելեաց քաղաքին հաշտութիւն արարեալ՝ ընկալան զնա 'ի ներքս, և բաժանեցին զթագաւորութիւնն 'ի միջի իւրեանց. տիրել Սալահատտինայ կողմանց Եգիպտոսի, և Սալէհի՝ Դամասկոսի։ Յետ հաստատելոյ զդաշինս՝ դարձ արար Սալահատտին յաշխարհն իւր յԵգիպտոս։